

սրբագրէր յետին հետքերը Մոսկուայի ատամնաբու-
ժական ուսանողին, Վասպուրականի, Սասնոյ եւ Տարօնի
պատասխանատու գործիչին, տալով իրեն անվնասու-
թիւն մը, պարգեցում մը, որոնց պէտքն ունէր տարիներէ
ի վեր, երբ Ճեմարանի վերին դասարանին մէջ կը զբաղէր
պրոշիւրեան ընկերաբանութեամբ ու ամէն նորադանդ
տղու հոգեբանութեամբ կ'երազէր մեծ, ստեղծագործ աշ-
խատանքը, որ պիտի ջնջէր մարդոց քէները, ազգերու
բռնութիւնը ու զանգուածներուն հոգին բանար արդար
վայելքին...

Փոքր անոր մարմինը նպաստ մըն էր անոր: Եր-
ջանի՞կ: Առաճիգ է այս բառը: Ու զայն գործածելու ատեն
զգուշութիւն է հարկաւոր: Չէ՞ր տառապեր: Այս հար-
ցումը արժան է պատասխանի: Կը տառապէր ծարաւէն:
Ու իր ծարաւը, դուք զուշակեցիք: Անոր բերանը կ'այրէր
պապանձումէն, վասնզի չունէր մէկը, որուն հետ փոխա-
նակէր զոյգ մը վարդապետական վիճաբանութիւն: Դի-
մացաւ սակայն: Անիկա կը դասաւորէր ուղեղին յատուկ
մէկ բաժինին մէջ, այդ ճամբուն վրայ զինքը յուզող մեծ-
մեծ գաղափարները: Հարկաւ քաղաք կար սա դաշտին
երեսին: Կիլիկիոյ դռներուն, հազարներու բարձրացող
բազմութեան մէջ քիչ, բաղդատաբար, իր ցեղակիցները:
Բայց դժբախտութիւն. բոլորն «էլ հեթանոս», դուք
իմացէք անգրագէտ: Որոնց հետ կը խօսէր անհրաժեշտը
միայն, օրուան հացէն ու ժամէն: Ծե՞շտը: Բայց ով որո՞ւ:
Ոչ ոք, որ դարձնէր ուշ ուրիշին ցաւին, իրենը այնքան
խոր չալկած ըլլալուն: Ոչ ոք, որ ուշանար շատախօսու-
թեան, որ ծնօտի պագերկեանութիւն կ'որակուի եւ ցամաք
հացով ու դաշտի խոտերով չի նուաճուիր: Իսկ բառե՞րը:
Բայց ո՞վ ունէր պէտք անոնց իմաստին: Մեծ մասով
թրքախօս այդ տղաքը զինքը ընդունեցին, առաջին իսկ
հանդիպումին, ըրդաք^(*) Մշոյ գեղերէն, որոնք իրարու

(*) Ըրդաք. – Աշխատաւոր (հողագործ):